

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒՆԴԻՄ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրս
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ

Երանցումն տողը
20 սանդիւն



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
լէն տրուիր

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր այն բաժանորդները՝ որոնք
դեռ չեն հաճած իրենց ներկայ
տարւոյ բաժանագիրը վճարել, կը
խնդրուի որ փոքրացնեն, ճարտոյն
տասներորդ ամսոյն մէջ մտանք.
միևնդեռ յրազրի՛ն բաժանագիրը
պէտք է կանխիկ վճարել:

ՀԱՅ ԵՆԻՉԵՐԻՆԵՐ

ՍՍԱԼԻՄԱՍՏ. 1 Սեպտեմբեր

Ենիչերիները, մի երկու ամսուայ
դադարելուց յետոյ, նորից վեր-
սկսեցին իրենց քաջագործութիւն-
ները և այս անգամ կարծես որոշ
նպատակով ճիշդ այն ժամանակ,
երբ Սալմաստումն է գտնուում թե-
մակալ առաջնորդը, ինչպէս և
բեւում է, առաջնորդ վարդապետի
բռնած հակաենիչերական ընթաց-
քը և ժողովրդի ցոյց տրուած տրա-
մագրութիւնը օգնել հայր սուրբին
ենիչերիներին Սալմաստից, թե-
կուզ բռնի միջոցներով, արտաք-
սելու գործում, շուրջման մէջ է
դռնել ամբողջ ենիչերական խումբը:
Ժողովուրդն ահաբեկուելու և ի-
րենց պրիստիժը պահպանելու հա-
մար նրանք նորից սկսեցին դիմել
սպանութիւնների և սպանալիք-
ների: Մահալ գիւղում, Սալմաս-
տում իւր սխրագործութիւններով
յայտնի Գ... շատերի ներկայու-
թեամբ հրապարակով հրացանով
մահացու վերջ հասցրեց գիւղացի-
ներից մէկին և փոխաւ միեւնոյն
գիւղերը խոյ: Առաջնորդը դէպքի
մասին տեղեկանալով անմիջապէս
կառավարութեան միջոցով հեռագ-
րեց խոյ և ձերբակալել տուաւ
Գ...ին, որին այսօր վաղն այստեղ
են բերելու: Սպանութեան մի այլ
դէպք էլ մի քանի օր առաջ պա-
տահեց Սասնա և Քալաշան գիւ-
ղերի մէջ տեղում: Ճանապարհին
մի ենիչերի, պատահելով մի կնոջ,
ուզում է բռնաբարել նրան: Կինը
գիմադրում է և սկսում է օգնու-
թեան կանչել: Կատաղած ենիչե-

րին, զայրացած կնոջ ցոյց տուած
գիմադրութեան վրայ, քաշում է
դաշոյնը և մի քանի հարուածով
գետին փռում խեղճին: Այդ սպա-
նութեան առթիւ սարկարազը,
բանտարկել տալով Սասնեցիներին
և Քալաշանցիներին, պահանջում է
նրանցից, որ կամ յայտնեն սպա-
նողի ով լինելը, կամ 200 թուման
տուգանք վճարեն:

Խեղճ գիւղացիները վախենալով
ենիչերիների վրէժխնդրութիւնից,
ստիպուած են լռել և չը յայտնել
սպանողի ով լինելը և երեւի որոշ-
ուած տուգանքը վճարելով ազատ
կարձակուեն:

Առաջնորդի ջանքերը Սալմաստը
ենիչերիներից մաքրելու համար ա-
մենայն գովասանքի և խրախու-
սանքի արժանի է: Թէեւ դա հեշտ
գործ չէ, բայց թող չը վհատի
հայր սուրբը, այդ գործում նրան
կաջակցէ անխտիր Սալմաստի ամ.
բողջ հայ ընակչութիւնը, նոյնպէս
և երիտասարդութիւնը որը, չը
նայած իւր փոքրաթիւ լինելուն,
վաղուց ի վեր մաքառում է ենիչե-
րիների դէմ:

Նոր-Դար

Դիս. Խմբ. — Յեղափոխականի դի-
մախին տակ պահուող այս ոճրագործ-
ները մինչեւ երբ դիմակազուրկ չը
պիտի ըլլան իրենց պետերէն:

Հայ Յեղ. Դաշնակցութեան պաշտո-
նաթերթ Դոշլակի վերջին առաջնոր-
դող յօդուածը ընդունելով այդպիսի-
ներու գոյութիւնը, վերապահու-
թեամբ միայն դանդաղ կը ձգտէր:
Բայց կը կարծենք թէ այլեւս անոնց
դէմ վերապահութեամբ վարուելու ժա-
մանակը անցած է: ասկէ անդին այդ
ոճրագործները յականէ անուանէ չը
խայտառակելը մեղսակցութիւն կը
նշանակէ: որովհետեւ դէպքերը այն-
չա՛ք բացորոշ, այնչա՛ք քստմեցու-
ցիչ են որ ալ չէ կարելի չգա մեղա-
նից չէ՝ ըսելով պրծիլ: պէտք է ոճ-
րագործները հրապարակաւ և անու-
նեղով մատնանել, եթէ կուզուի յե-
ղափոխական կազմակերպութեան վար-
կը փրկել և ժողովուրդին ստուար
մասը, իր առաջնորդներով ու ժողո-
վականներով չը գինել իրենց դէմ:

Ինչպէս վերի նամակը ցոյց կու-
տայ, Պարսկաստանի մէջ, ազգին և
ենիչերիներուն միջեւ կռիւը սկսելու
վրայ է: հոն Թիւրքէն և Քիւրտէն
աւելի իրարմով զբաղիլ, զիրար հա-
լածել սկսած են: պէտք է անմիջա-

կան վախճան մը տալ իրաց այս
տխուր վիճակին, եթէ ոչ ամբողջ
պատասխանատուութիւնը յեղափոխա-
կան բարձրագոյն մարմիններու վրայ
կը ծանրանայ:

ԿԻՆԻԿԵՈՑ ԿԱԹՈՂ. ԲՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ատանայէ, Սեպտ. 29 թումով,
Պատրիարքարան հասած հեռագիր
մը կը ծանուցանէ թէ, Կիլիկիոյ
Աթոռին Կաթողիկոսի մը ընտրու-
թեան ձեռնարկող Ընտրողական
Ժողովը, իր առաջին նիստը գու-
մարեր է Ս. Աստուածածին Մայր
Եկեղեցիին մէջ, նախագահու-
թեամբ Պիլէճիկի առաջնորդ Տ.
Մովսէս Եպս. Կէօմրի-ճեմանի,
որ ընտրական գործողութեանց
Պատրիարքարանի կողմէ հսկելու
պաշտօնով, իբր Գործադիր Տե-
սուչ, Ատանա զրկուեր էր: Նա-
խագահ Սրբազանը, առաւօտուն
եկեղեցիի ժամերգութեանց միջո-
ցին, կատարուելիք ընտրութեան
կարեւորութեանը վրայ քարոզեր
է. յետոյ թուրք կառավարութեան
ներկայացուցիչ Մէքթուպճի պէ-
լին ներկայութեանը, նիստը ա-
ղօթքներով, շարականներով ու
Սուլթանի կեանքին համար բարե-
մաղթութիւններով բացուելէ ետք,
Նախագահ Սրբազանը բանախօ-
թիւն մը արտասանելով, ջանացեր
է Ընտրողական Ժողովոյ գումար-
ման նպատակը բացատրել և ար-
ժանաւոր կաթողիկոս մը ընտրե-
լու մասին մէկ քանի խօսք ընելէ
ետք, Ժողովոյ հաղորդեր է ընտ-
րելի եպիսկոպոսներու ցանկը, ո-
րուն վրայէն ընտրութիւնը կա-
տարուած է:

Ահա առաւելագոյն քուէ ստա-
ցող վեց եկեղեցականներու անուն.
ները.

1. Տ. Տրդատ Եպս. Պալեան,
Կեսարիոյ Առաջնորդ. 44 քուէ:
2. Տ. Ստեփաննոս Եպ. Յովա-
կիմեան, Նիկիոյ վերջին Առաջնորդ.
42 քուէ:
3. Տ. Բարթողիմէոս Արք-Եպս.
Չամչեան, Պրուսայի նախկին Ա-
ռաջնորդ, 40 քուէ:
4. Տ. Ներսէս Եպս. Ասլանեան,
Ռոմոստոյի Առաջնորդ. 39 քուէ:

5. Տ. Սահակ Եպս. Խապանեան,
Երուսաղէմի վանքին լուսարարա-
պետ, 37 քուէ:

6. Տ. Մովսէս Եպս. Կէօմրի-ճե-
ման, Պիլէճիկի Առաջնորդ. 35
քուէ:

Այս վեց անունները Պատրիար-
քարանի կողմէ Բ. Դրան պիտի
ներկայացուն. Դուռը անոնցմէ
մէկ քանին ջնջելու իրաւունք պիտի
ունենայ, ինչպէս անցեալ անգամ
վեց անուններէն չորսը ջնջած էր:
Մենք վստահաբար կըսենք թէ
Բարթողիմէոսի անունը չը պիտի
ջնջուի, որովհետեւ Սուլթանին
կաթողիկոսացուն է:

ՕՐՈՒՆԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգ-
ները այս միջոցիս ծանր տագնապ
մը անցնելու վրայ են, որուն հա-
ւասարը գուցէ հանրապետութեան
հիմնադրութենէն ի վեր տեսնուած
չէր. երկրին բովանդակ ժողովուրդը,
հարուստ թէ չբաւոր, սարսափա-
հար հանդիսատեսը կըլլայ կեան-
քի անհրաժեշտ պէտքերն իսկ
վտանգող պատահարի մը, որուն
առջեւ նոյնիսկ երկրին բարձր ա-
տենակալութիւնը, նախագահ
Ռուզվելտի հետ, անկարողու-
թեան դատապարտուած է:

Խնդիրը զլիսաւորաբար հանքա-
գործներու գործադուլին շուրջ կը
դառնայ. հինգ ամիսներէ ի վեր
Բէնսիլվանիոյ մէջ 150,000 ած.
խահանքի բանուորներ բանձողի
մէջ են. այսպիսի վարմունքի մը
բնական հետեւանքն եղող ածուխի
գնոյն յանկարծական բարձրացումը
(որ հնգապատկուեցաւ) ու անտոյգ
ապագայի մը յաճախանքը, բնակ-
չութիւնը յետին անհանգստութեան
մատնած է. բայց գոնէ տաք ե-
ղանակին մէջ ածուխի պակասը
այնքան ալ զգալի չէ. հապա ձմե-
ռը ինչ պիտի ըլլայ. չկայ ժողո-
վուրդի մը հաւար աւելի անտա-
նելի, աւելի աղետալի փորձանք
մը քան վառելիքի, հացի պակասը:
Միւս կողմէ ածուխի պակասը
անկարելի կընէ առուտուրը, ճար-

տարարուեստի յառաջգիծութիւնը, անգործութեան կը դատապարտէ ամէն դասակարգի աշխատանքներն ու աշխատանքները. աւելին կայ առանց հանքածուխի, լուսավառութեան կազմարտադրութիւն. հետեւապէս, ո՛չ միայն առեւտրական հաստատութիւններն, այլ անհատական հիմնարկութիւնները, գործողները, հիւանդանոցները կը դատապարտուին վառելիք չունենալով, ալ նաեւ պիտի զրկուին գիշերը լոյս ունենալէ. կը հասկցուի չփութութիւնը՝ որուն երկիրը ենթակայ է. երեւոյթական նախկին նախարար, լիմէն կէյճ ճառի մը մէջ կըսէր. «այնպիսի ծանր կացութեան մը հանդէպ կը գտնուինք, որուն նմանը մեր ժողովուրդը երբէք անցուցած չէ»:

Այս գործադուլը, տեսական մէջ եզական իր տարածութեամբն ու տեւականութեամբը, վերջին ժամանակներ Մ. Նահանգները ողողող դժուարութիւններու մէկ չարաշուք հետեւանքն է. յայտնի է դրամական ընտանիք կազմակերպութեան նշանակութիւնը. մէկ քանի միլիոն տէր անհատականութիւններ—որոնց նմանը Ամերիկայ միայն կարող է արտադրել—իրենց հսկայ դրամագումարներուն ուժովը, իրենց ձեռքին մէջ կը կեդրոնացնեն երկրին բոլոր արտադրութիւնները, կեանքի տարրական պէտքերէն, ածուխէ, միսէ, բէրրօլէ սկսելով, մինչեւ երկաթուղի, նաւ, հանք, պողպատ, երկաթ: Նպատակնին գնորդ յանկարծ բարձրացնելով, մէկ հարուածով միլիոններ գրպանել է. իրենց կոյր շահագիտութեանը մէջ, հանքային գործաւորներու օրականները պակսեցուցին, որուն հետեւանքով 150,000 բանուորներ, իրենց ներկայացուց.

չին Մ. Միչիկէ հրաւերով բան-թող ըրին, որ հինգ ամիսներէ ի վեր կը տեսէ. բայց մինչ թըշուառ հանքագործները դիմադրական ճիգերու կը կորստին այսպիսի զոհողութեան մը դիմադրելու համար, դրամատէրները ճշգրիտ այս բանթողին պատճառաւ մեծամեծ շահեր կընեն. իրենց առձեռն ապրքները հնգապատկուած գնով մը սպառելէ զատ, որովհետեւ տեղաւորութեան (երկաթուղի) միջոցներն ալ իրենց ձեռքն են, ուրիշ տեղերէ ածուխի ներածութիւնը կարգիլն ու այսպէսով ածուխի գինը միշտ նոյն սղութեան մէջ կը պահեն:

Այս կերպով, ափ մը անհատներ 80 միլիոն բնակչութեան մը կեանքը իրենց ձեռքին մէջ կը բռնեն, անոնց ամէն տառապանք կրկնաւորով, ու տեղային իշխանութիւնը զանոնք սանձելու օրինակն միջոցէ մը զուրկ է. իսկ նախագահ Ռուզվելտ, որ հանրապետականներու, այսինքն դրամատէրներու ընտրեալն է, Չիչինայի իր ճառին մէջ դրամատէրներու դէմ խօսեցաւ, թէ եւ այսպէսով յառաջիկայ տարի իր վերընտրութիւնը վտանգէր. հասկնալի է ուրիշ թէ այս վեհանձն Ատենակալը իր բոլոր կարողութեամբը ջանար երկիրը չը տեսնուած թշուառութեան մը մատնող այս փորձանքը հետ ցնելու. հետեւապէս, պատեւազմական: Ճովային ու թղթատարական նախարարներու հետ գումարում մը ունենալով, դրամատէրներու իր միջամտութիւնը ներկայացուց, բռնութիւն բանեցնելու որ և է միջոց չը կրնալով գտնել. բայց ընչաքաղ դրամատէրները մերժեցին այդպիսի միջամտութիւն մը:

Իսկ ընդդիմադիր կուսակցութիւնը, հանրապետականները, դրամատէրներու դէմ ժողովրդային գրգռութենէն օգուտ քաղելու ջանքով, յառաջիկայ տարիի նախագահական ընտրութեան համար իրենց ծրագրին մէջ հանքերու «սոցալ-նացում»ը, այսինքն պետութեան ձեռքով շահագործումը անցուցին: Առայժմ, հանքագործ բանուորները, իրենց թշուառութենէն ալ սրտնեղած, դրամատէրներու դէմ խիստ միջոցներու գիւծելու կը կրտն. դրամատէրները կը դիմադրեն, աւելի քան երբեք յամար. հանրապետութիւնը ծանր անիշխանութեան մը մատնուած է. արդարեւ ապագան հետաքրքրական անակնկալներ կը վերապահէ այս եզական պայքարին համար. պիտի արժէ որ ուշագիւրդէ պրեն-րուն հետեւեալնք:

Տ. Է.

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Նախեմս (Թոյս) նորակազմ Հայ թատերախումբը, «Սանդղալի» սրահին մէջ, շաբաթ ու կիրակի գիշեր յաջորդաբար ներկայացուց «Լիոնի Սուրհանդակը» ու «Ս. Պօղոս եկեղեցւոյ զանգակահարը» թատերախաղները, առաջնորդութեամբ Պ. Վ. Պապանյանի թատերասահին նստարանները, գրեթէ ամբողջովին, երկուսն ալ զգաւորութեամբ էին. այս պարագան ինքնին բաւական է անշուշտ նորակազմ խումբին տալու քաջակերութեանց ամենէն պերճախօսը: Ու նորակազմ թատերախումբի մը նկատմամբ պահանջկոտ ըլլալու պէտք ալ չկայ, երբ առաջիկային մէջ մանաւանդ անկողմնակալ ու ճշգրիտ համոզում մը գոյացնել օրինաւոր է, ուր կազմաւորութիւնը իր անգամներուն յատկանշական բոլոր կողմերովը հանդիսա-

տեսներուն պիտի ծանօթանայ: Եւ առաջին ներկայացումէն սակայն, առանց երբեք կատարեալ տպագործութիւն մը գոյացնելու յաւակնութեան, առանց մանաւանդ անթերի կարծիք մը յայտնելու փորձութեան, գուցէ կարելի ըլլայ քանի մը բան ըսել մէկ քանի ընդհանուր գծերու վրայ: Ու դիտելու առաջին բանն ալ, աներկաւ, տեղային հանդիմանքը ճշգրտօրէն ներկայացնելու դիտաւորութեամբ, ինչպէս ըզրդներ գտնուեցան, հագուստներու, զարդարանքի մասին թատերականներու փութաշուն հոգատարութիւնը ըլլալու է: Կիրակի գիշերուան խաղը մանաւանդ, Շառլ Բ. Պոստելիի ժամանակէն առնուած խաղ մ'էր. ազնուականներու, լորտերու, նոյնիսկ թագաւորին ներկայութեամբ, Վիկթոր Հիւկոյի Մատի թիւառին հետ մէկ քանի նմանութիւններով. խաղին կազմակերպչները, ինչպէս կերեւի, խնամք տար իրենց այդ հեռաւոր ժամանակին մէկ նմանութիւնը կեդրելու մտքով, պատշաճ հագուստներ կրելու:

Գալով խաղի ներկայացման տեսակէտով դերակատարներու վարմունքին, թատերախումբին վարիչը, Պ. Պապանյան վառնացիներու արդէն բաւական ծանօթ ըլլալու է. շաբաթ գիշեր, «Լիոնի Սուրհանդակին» մէջ միանգամայն «Տիւպօս» ու «Ժողովրդագիր» դերերը ստանձնել էր, դերեր որոնց երկուսն ալ զգացականութեան, յանկարծական յուզումնայորդութեանց արտայայտութիւններ չեն պակսիր ու Պապանյան, որ առաջին երեւումէն իսկ ողբերգուի իսկական ընդունակութեամբ օժտուած ըլլալը հանդիսատեսին կը զգացնէ, նոյնքան շարժութեան բնականութեան ու վայելչութեան, քաղաքականութեան մէջ, որքան յանկարծական տպագործութեանց տակ զգացումներու հրայրքոտ արտայայտութեամբ, աներկբայ տարբեր արժանիքով մը պիտի ներկայանար, եթէ, հակառակ իր զօրեղապէս զգացական խառնուածքին, զգացումներու թարգմանութեանը մէջ, աւելի որոշապէս տպագործ խոսուածք մը գնէր: Գուցէ իրեն կը պակսէր զգա-

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ (20)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԲՈՒՄԱԿԱՆԸ...

— Ուսկի՞ց պիտի ստանամ:
— Ինչէ:
— Ձեռնէ՞:
— Այո՞:
— Ձարմանք, դուն ուսկի՞ց պիտի գտնես կլորիկ գումար մը:
— Ի՞նչու չէք հաւատար. միթէ՞ կլորիկ գումարը մուրացկաններու քով չգտնուիր:
— Ի՞նչ գիտնամ... կարելի է... բայց յայտնէ՛ նայիմ՝ նպատակդ ի՞նչ է:
— Կընդունի՞ք, անանկ չէ՞:
— Կընդունիմ:
— Աղէ՛կ, ուրեմն առէ՛ք այս երկու ոսկին: Եթէ յաջողի՞ք գործը վերջացնելու, տասը հատ եւս պիտի ստանաք:
Բանտապահը գրեթէ ապշած ու ինքնիմէ ելած՝ անմիջապէս առաւ երկու ոսկին ու դրպանեց:

— Հիմակ ըսէ՛ք ինծի թէ մահապարտներու զընտանը պարագ է թէ ո՛չ, հարցուց Միւրո ախպար:
— Պարագ է, պատասխանեց բանտապահը՝ բոլորովին ապուշ կտրած ձայնով մը:
— Կուգե՛մ հոն երթալ ու աչքէ անցունել զայն:
— Ի՞նչու համար:
— Կեցէ՛ք, ատիկա վերջէն կը յայտնուի: Նախ գործը կատարենք:
— Մէ՛կը պիտի գայ:
— Այո:
— Կարելի է փախցունելու միջոց մը պիտի գտնէք, անանկ չէ՞. թոթովեց բանտապահը:
— Աստուած գի՛տէ... մըմնջեց Միւրո ախպար:
Բանտապահը հողէ ճրագ մը վառելով Միւրո ախպոր տուաւ ու ըսաւ.
— Ես ցոյց կուտամ քեզի զնտանը: Դուն մախի՛ր հո՛ն, քննէ՛ ու վերադարձիր սենեակս: Գալով ինծի, պիտի նայիմ որ կասկածող մը չըլլայ եւ մեր կատարած գործը չհասկցուի:
Միւրո ախպար ուրախութենէն խղզուեցաւ, հետեւաբար գլխի նշանով մը հաւանութիւն մը ցոյց տուաւ ու սենեկէն ելնելով ուղղակի բանտապահին մատնանի ըրած զնտանը մտաւ:
Այդ դարչնի նկուղը կը հոտէր: Միւրո ախպար ձեռքին հողէ ճրագը քիչ մը լուսեց ու անկիւն մը քաշուեցաւ: Պահ մը կեցաւ, ահա՛ զգաւ, սպասեց ու յետոյ դէպի անկիւնը ծռելով սկսաւ փորել: Հազիւ թէ թիզ մը խորունկ փոս մը բացաւ, ահա՛ դաշոյն մը գուրս ելաւ:
Միւրո ախպար համբուրեց այդ երկաթի կտորն ու

ծոցը դրաւ: Ու փորած փոսը ծածկելով ձեռքն առաւ ճրագն եւ գուրս ելաւ:
Բանտապահը չլիւքին ծայրը կեցած կը սպասէր:
— Ինչպէ՞ս է... քննեցի՞ր, հարցուց բանտապահը:
— Այո՛, յարմար կերեւի... եւ կը յուսամ թէ կը յովողինք, պատասխանեց Միւրո ախպար:
Բանտապահին դէմքը ժպիտ մը փայլեց: Ընչաքաղցութեան ողբին իր մէջ այնպի՛սի ուրախութիւն մը լեցուց որ չկասկածեցաւ թէ՛ Միւրո ախպար արդէն իր գործը վերջացուց...:
— Մնաք-բարո՛ւ, մըմնջեց Միւրո ախպար՝ իր դուր ու կռնած ձեռքը բանտապահին տալով:
— Երթա՛ս-բարո՛ւ, կմկմած բանտապահը:
Միւրո ախպար գլուխը ծռեց ու արագ արագ գուրս ելաւ բանտէն:
Միւրոյի կողմէն կոխած էր: Սեւ ամպերը կորոտային ու անձրեւի կաթիլները սկսած էին վար թափուիլ: Բանտին յառաջակողմէն ուղղակի Արարուց-Դուռը կոչուած անյգըն հասաւ ու անկից գուրս ելաւ:
Մաստիկ քամի մը կ'ար, որ անձրեւախառն փոշի մը կը զարնէր խեղճ ձերուների Միւրոյի աչքերուն մէջ: Բայց Միւրո ախպար կը քաշէր ու այնքան մեծ մեծ կը նետէր իր քսելներն որ կարծես կը վազէր:

(Շարունակելի)

ցականութիւնը թնդացնելու, գոռացնելու ձայն մը, առողջանութիւն մը, որ սակայն իրմէ նուազ բաղդաւոր ընկերներէն ումանց զլացուած չէր. արուեստին մէկ բնական հետեւանքն է արդեօք ձայնի այդ զգալի խլովութիւնը, ու պէտք է հոգ տեսնել առհաւատչեալ մը իրապէս իր դերին գիտակցութիւնը ունեցող, իր դերին գիտակցութեամբը տառապող, սպառող արուեստագէտի մը համար. բայց Պապականի հետ միւս դերակատարներու քով ալ մերթ համարձակ խաղցուածքի մը վարկեաններ անկարելի չէր նշանակել. թէեւ կրնային, կամ աւելի ճիշդը, պարտաւոր էին լաւագոյն պատրաստութեամբ մը ներկայանալ, խաղը սերտելով, խօսակցութեանց, մանաւանդութեանց մէջ քիչ մը նուազ նորեկ, նուազ նորակազմ գտնուելով. խաղին զանազան մասերը իրարու շղթայող նախադասութեանց բառերուն արագ, պայծառ ու ճշգրիտ արտաբերութիւնը՝ թատերական յաջողութեանց մէջ տիրական անհրաժեշտութիւն մ'է, զոր թատերաստումին վարիչը անշուշտ ուրիշներէ սորվելու պէտք չունի, ինչպէս պէտք չունի ալ իմանալու թէ հանդիսատեսին առջեւ ո՞րքան աննպաստ տպաւորութիւն կը թողու գերասան մը (ու միայն Շառլ Սոլուարդի դերակարը չէ որ կակնարկեմ) երբ իւրաքանչիւր բառի առջեւ շարունակ յուշարարին օժանդակութեանը դիմելու հարկադրուած է։ Այս գիտողութիւնը թերեւս պատշաճէր մասնաւորապէս իր շարժումներին ու խօսուածքին միտմիտ բնականութեամբը որոշուող նորատի գերասանութիւնի մ'ալ (եթէ չեմ սխալիր Օր. Վեմանուշ անուանով) որ աներկբայ տարբեր պատրաստութեամբ մը կրնար շատ բան շահիլ. իսկ ուրիշ գերասանութիւնի մ'ալ, Տկ. Շաքարեան՝ եթէ կազմուածքի անթերի վայելչութեամբ, ձայնի արտայայտութեան, կ'նոջական ակարութեանց թարգմանութեան մէջ գրաւիչ բնականութեամբ մ'ալ փայլի, իր կարգին գուցէ չա՛ն ունենար գերերու աւելի յամառ, աւելի հրայրեղոտ, աւելի սպառնալիչ ուսումնասիրութեան մը մէջ։

Տ.

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Դ.

28 ՍԵՏՈՒԿԻ ԽԱՉԱԳՈՂՈՒԹԻՒՆԸ

(Շար. 69րդ թիւին)

Կատակերգութեան վերջն եկած էր. գործին մէջ գաղտնիք ըլլալուն անպայման կերպով համոզուած էի. որոշեցի «բաց նամակ»ով մը խնդիրը ժողովուրդին պարզել, Բաց նամակը կը պատրաստէի. վարդօն քովս եկաւ և ինծի առաջարկեց 2,000 ֆրանքը գանձել և ժընէվ ղրկել։

Իր երեսն նայելէս հասկցաւ թէ ինչ ծանր նախատինք մըն էր իրեն համար. այնպէս կարծեցի թէ 2,000 ֆրանք ժընէվ ղրկելով, հաւանական է որ ժընէվէն Առաքելին վերադարձնեն. վարդօն ըսի. «ստակները եթէ գանձեմ Պուկարական պանգան պիտի

դնեմ, մինչեւ միւս խաչագողներու գտնուելը»։

Վարդօն այլեւս ոչինչ չառարկեց. լաւ հասկցաւ որ խաչագողներէն մին ինքն է ըսել կուզէի. և յարեցի. «ահա «բաց նամակ» մը պիտի հրատարակեմ, որուն մէջ պիտի ըսեմ. «որչափ գողն է դատապարտելի, այնչափ և աւելի գողցունիլ տուողը»։ Աւելի դատապարտելին քեզ կը գտնեմ այս խնդրոյն մէջ. եթէ կրնաս հրապարակաւ հերքէ ըսածներս։ Ասկէց վերջ պէտք չէ որ ինծի հետ տեսնուիս. որովհետեւ շատերը ինծի կըսեն. «քեզի պատիւ չը բերեր այդ... մարդուն հետ տեսնուիլ. հասկցա՞ր»։

Կրկին տեսնուելու մասին վարդօն ըսածները բնաւ ուշադրութեան չառի և միշտ իրեն ըսի «պէտք չէ որ ասկէց վերջ իրարու հետ տեսնուինք»։

«Բաց նամակ»ը հրատարակեցի թերթերու մէջ և վարդօն չկարողացաւ ոչինչ գրել այդ մասին. և արդէն ինչ պիտի գրէր եւ ինչ կարող էր գրիլ. ես միշտ պատրաստ էի խԱՉԱԳՈՂ բառը խառնել իր ճակտին. իրեն խաչագող ըլլալն ապացուցուած էր. մանաւանդ վերջին օրերը երբ բարեկամ մը ինծի գրած էր («պատու խօսք» առնելէն վերջ որ իր անունը չը հրապարակեմ) թէ...

«Բաց նամակ»ը դեռ հրատարակութեան չտուած վարդօն ինքզինքն հետաձգեց էր այն ծանօթներու գիրքը, որոնք այդ փութիկ ծխափաճառութեան գործն ընելու համար նիւթապէս օգնած էին ինձ. վարդօն այնպէս կարծած էր թէ այդ մարդկանց ազդեցութեան ներքեւ պիտի ստիպուիմ բաց նամակս չհրատարակել։

Այդ ծանօթներս ինձա՛յ խնդրեցին որ խնայեմ վարդօնին, խնդրեցին չհրապարակեմ եւ վարդօնին հետ տեսնուիմ ինչպէս առաջ կը տեսնուէի։

Անոնց պատասխանեցի թէ շնորհակալ եմ իրենց ինձ ըրած անձնական օգնութենէն, բայց վարդօնի խնդրը հանրային ըլլալով, չեմ կրնար իրեն մեղաւորութիւնը քողարկել և իրեն հետ այլեւս տեսնուիլ։

Այդ ոչխառամիտ ծանօթներս այդ օրէն իրենց յարաբերութիւնները գաղտնիցեցին ինծի հետ։

Իմ գործի նուիրատուութեան մէջ վարդօն իր բաժինը ունեցած էր իր կարողութենէն վեր չափով մը, որ քննելու եւ շոյեւել նշան էր. Բաց նամակս հրատարակելէս վերջ վարդօն իր տուած նուէրի գումարն ետ ուզեց և ես իսկոյն վճարեցի։

...

Առաքելի ապրանքներն իմ տրամադրութեանս ներքեւ կը մնային. Պիւռոյին և Ռոստոմին գրեցի Առաքելի փախուստն և այդ մասին իմ ունեցած անձնական համոզումս։

Առաքելը Պուրկաղէն Զարեհ Պէշիբեան անունով մէմը նամակով մը իրեն փոխանորդ կարգած էր և Պ. Ռին ղրկած էր ապրանքներն առնելու։

Ես յայտարարեցի թէ ապրանքները իմ քովս են. Յետոյ Առաքել անձամբ Պուրկաղէն վառնա եկաւ ու դատարանի միջոցաւ Պ. Ռին խանութը գոցելու պաշտարարեց, որովհետեւ մեծ խաչագողները զինք քաշալերած էին. եթէ ոչ Առաքել մեր ստիպմամբը պիտի հարկադրուէր պատույ ատենի մը առջեւ իր մեղաւորիցներուն անունները յայտնել. Տեսայ թէ Պ. Ռին խանութը եւ գործը չաւրուելու համար 2000 ֆր. կառնաւ ցոյց տալ պէտք է դատարանին, ինչ որ իմ քով կը պակսէր. իսկ իմ ծանօթներուս միտքերը վարդօն պրդտորած էր որպէս զի եթէ իրենց դիմեմ մերժեն։

Իսկ յանկարծ ինք մեր անպատկառ վարդօն եկաւ և զիս խանութէն դուրս կանչելով առանձին տեղ մը ըսաւ ինծի։

«Այ՛ գործէն ձեռնմալի եղիր, որովհետեւ Դաշնակցութեան աննպաստ է ըրածդ»։

Այդ մարդուկի ըսածէն այնպէս հետեւցուցի թէ վարդօն այնպէս համոզուած էր որ խնդիրը դատարանի պիտի հանել տամ և Առաքելը պիտի յայտնէ նշանաւոր խաչագողներու տնունները. որով գաղտնիքն երեւան պիտի ելնէր. բայց ինչ օգուտ. գործը դատարան ձգելու՝ Առաքելը և խոշոր խաչագողները երեւան հանելու միջոցները կը պակսէին ինծի։

Միւս օրը Առաքելը եկաւ և ես ճարահատեալ գնացի ապրանքները իրեն յանձնեցի։

Ապրանքները Առաքելին յանձնելէս վերջ, իսկոյն գրեցի Պիւռոյին և Ռոստոմին, և իմ համոզումներս ու կարծիքս յայտնեցի թէ, վարդօն բացարձակապէս մեղաւոր է այս գործին և յանցանքն աւելի անոր վրայ կը ծանրանայ և տլին. Գրած նամակիս Պիւռօն և Ռոստոմ գրեթէ չը պատասխանեցին։

Ապրանքները յանձնելու լուրին վրայ վարդօն ուրախութիւնը չի կրնալ ծածկելով, խանութս եկաւ պարզապէս զիս ծաղրելու համար եւ ըսաւ ժպիտով մը.

— Ապրանքները Առաքելին յանձնեցի՞ր։

Գլխու շարժմամբ այո՛ւ ըսի ու դուռը ցոյց տուի որ դուրս ելնէ...

Վարդօն կը հաւատար թէ Առաքել իր ապրանքները ազատած ըլլալով, այլ եւս իւր խաչագողներու անունները յայտնել չպիտի հարկադրուէր։

Ահա այս պատճառաւ ուրախ էր։

(Շարունակելի)

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Աստորո-Հունգարիոյ Սուլօվա քաղաքի մօտ գտնուող Հոմոր գիւղաքաղաքի և շրջականերուն մէջ ցրուած անգլիացի և ամերիկացի Աւետարանականները զուրկ գտնուելով եկեղեցիէ մը, անոնց երէցը գիմեր է Սուլօվայի Հայոց Հոգաբարձութեան, որպէս զի Հոմորի Հայոց եկեղեցիին մէջ առժամապէս պաշտամունք կատարելու արտօնուի. Հոգաբարձութեան նախագահը Բրունքուլ ասպետը, այս մասին Եւրոպայի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոսի հաւանութեանը դիմեր է, որը նկատի առնելով քրիստոնէական եղբայրասիրութեան ոգին, նա մանաւանդ թէ Անգլիոյ և թէ Ամերիկայի մէջ Աւետարանականներու կողմէ մեր եկեղեցականներուն ընձեռուած յօժարակամ դիւրութիւնները՝ հոգեւոր պաշտամունքներ կատարելու մասին, հրամայած է Սուլօվայի Հոգաբարձութեան, տալ խնդրուած արտօնութիւնը, միանգամայն հրահանգ տալով որ առաջիկային մէջ կարգ մը թիւրիմացութեանց տեղի չը տալու նախազգուշութեամբ, հարկ եղած օրինական ձեւակերպութիւնները կատարուին երկու կողմէ։

— Պորտից Շահը, Պաքու ժամանելուն, կրկին Թուրմանեան եղբարց բնակարանը իջեաներ է։

— Արեւելք իր վերջին թուոյն մէջ զի հերքէ մեր նախորդ թուով ծանուցած այն լուրը, որուն համաձայն Տօթթ. Խօրասանեան Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամակցութենէ հրաժարեր է եղեր, առողջապահական բարեկարգութեանց մասին իր յանձնարարութեանց անխելի մնալէն սրտնեղած։

— Ռուստիոյ Պապատաղ գիւղաքաղաքի Թաղ. Խորհուրդը, Պատրիարքարանէ բաժնայ մը խնդրած է, շրջակայ 10 գիւղերը հովուելու համար։

— Հանրաժանութ բարեբար ժամարեան եղբայրներէ մին է եղեր այն առեւանգուած հայը, որու մասին անցեալ շաբթու քանի մը տողով գրած էինք. այժմ մանրամասն տեղեկութիւններ կուտայ Շուշիէ գրուած նամակ մը, զոր յաջորդ թուով պիտի հրատարակենք. Առեւանգողները հայ եէնի. չէրինք են եղեր։

— Շուվայէ մեզ կը տեղեկացնեն թէ ամսոյս 6ին (վաղը) տեղւոյն Ազգ. վարժարանի Հոգաբարձութեան ընտրութիւնը պիտի կատարուի. նախկին Հոգաբարձութեան երկու անդամոց անորակելի քմահաճոյքին հետեւանօք թէեւ մատնիչ վարժարապետը 2-3 շաբաթ է ի վեր ոտքը Ազգ. վարժարանէն ներս գրած է, բայց Շուվայցիք իրենց զաւակները չեն ղրկեր վարժարան, ուր միայն 4-5

աշակերտ կը գտնուի եղեր, որոնք այդ երկու հոգաբարձուին ազգականներն են. իսկ միւսները կը նախընտրեն անուս մնալ քան մատնիչի մը աշակերտիլ: Այս պատճառաւ տեղւոյն խոյ. խորհուրդը հարկ դատած է եկեղեցւոյ բակին մէջ ուրիշ վարժարան մը հաստատեն, ցոր տնօրինութիւն:

Կը գովենք Շումլայի ազգայնոց և իրենց զաւակաց այս փորձունքը և կը յուսանք թէ վաղուան ընտրութեան մէջ պիտի գիտնան իրենց քուէները տալ այնպիսի անձ. նաւորութեանց՝ որոնք գիտնան կրթական գործի նուիրականութիւնը անձնական ամեն նկատումներէ ու կիրքէ վեր բռնել:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պապը Սերասբերտէն վերիլէն սօն էմիրէր. — Վարտար վէ Բօսոր ճիւղարնտա պուլընան ասը լարըն իլերէնմէսինի մէնն իթմէք, վէ Սերէզէ կիտէն չըմէնտըֆէրին քէօբըիւլէրինի ասըլարա գարշը մուհաֆազա էլլէմէք վէ պուլընալըն տէնիլլէ վէ Աթոստաքի Բուս մանասթըրը իլէ մուխապէրէ վէ մուվարէտէսինէ մէյտան վէրմէմէք:

— Սերասբէր գաբուլընտա թէ. ճէմիւլ ուլընան ասըբըիլէ մէճիսինի գարարը մուհիպ, Մաքէթօնիայա կէօնտէրիլէն հէյէթի աս. քէրիլէ Սերէզէ եէթիշմիշ տիր: Սերէզ գասապասը Սէլանիք վիլայէթի տախիլինտէ Սթըուսա նէհրի քէնարընտա քեաին տիր. վէ Սթանպուլտան Սէլանիք վէ Մօնասթըրա կիտէն չըմէնտըֆէր Սերէզտէն կէշէր. էկէր ասըլար Ոթըուսա նէհրի իւզէրինտէ պուլընան քէօբըիւլ քէսսէլէր, թիւրք ասըբըիլէրին վէ ճէպանէլէրին նազիլ պէօյիւք միւշքիւլաթու ուղրայաճաք տըր:

— Էվլէթի սալը կիւնիւ քիւլ. քիւլտէ (Սէլանիք) ասըլար վէ աս. քէր պէնիլտէ վուգու պուլըն միւսատէմէտէ ասըլարտան 42 քիշի էօլմիւլ վէ պիր գաշ ասըբէր եա. բէլէնմիշ ուլըրը վէ մահէլի մէզ. քիւլրէ վէ Մէնէլիշէ իքի ալայ ըտիֆ վէ մուհաֆըզ թապուրարը կէօնտէրիլտիկի Սէլանիքտէն պիւտիրիլմիշ տիր:

— Պապը Ալի տէվլէթլէրէ պիւրէր նօթա եօլլարուպ, պուլկար սի. նօրընտան չէթէլէրին թիւրքիայա կիրմէսինէ վէ թիւրք օրտուսընտան թազիգ ուլընան ասըլարըն սինօրտան իշէրի գաշմասընա Պուլկարիա հիւթիւմէթի միւսատէ իթմէքտէ օլմասընտան տօլայը թէ. չէքի իթմիշ տիր:

Քէզա Բիւօ մանասթըրընտա պիր ըսեան պանտէրասընըն թազ.

տիս օլմասը իլէ՝ պուլկար բէտիֆ զապիթլէրին անընլէ Մաքէթօնիայա կէշմիշ օլմալարընը պիր տէլիլ նէվիլնտէն Պապը Ալի տէօվլէթլէրէ կէօթէրմիշ տիր:

— Մըսըր Խաթիվի Երլտըզ քէօշ. քիւլտէ թաամ իթտիքտէն սօնրա Սիպտեմբեր 28տէ վարօրը մախսուսի իլէ Մըսըրա միւթէվէտէհի. հէն Սթանպուլտան հարէքէթ իթմիշ տիր:

— Արնափուլարըն մէշհուր բէլիսի իսսա-Պօլիթմազ հիւթիւմէթէ թէսլիմ օլմուշ տըր:

— Լօտրա կազէթալարըն վիէննա մուխպիրի չէօլլէ պիւտիրմիշ տիր:

«Պիր ինկիլիզ կազէթալարըն եազտըզը հափատիլէրէ պիւնաէն, Բուսիանըն Պապը Ալի իլէ պիլ մուխապէրէ. Բարիլ ուհնամէսի ահքեմալնա մուղայիր օլարազ» Բրէնս կօրչաքոպրն 22 սէնէ էվլէլ եաբտըզը կիպի՝ Բուս հարպ սէֆիլէրին Սթանպուլ պոզալլալընտան կէշմէլէրինէ միւսատէ իտէն պիր պէյանն սմէ նէշր իտի. լէճէկինէ տալիր վերիլէն հափատիս վիէննատա պէօյիւք հէյէճան հասըլ իթտի:

«Վազաա թիւրքիա վէ Բուսիա պէնիլտէ խուսուսի պիր միւլզէքէրէ եէտի տէվլէթլէրտէն միւս նազտ օլան պիր ահնամէի լազլ իտէմէզ իսէտէ, Բուսիանըն Շարգտա թէլայլէ հարէքէթի պուրանըն բօլիթիգա տաիրէլէրինտէ չիւհէլէր ուլանտըրմազտա օլուպ, Բուս լարըն Սթանպուլ պոզալլալտա տօղրու իլերէմէք իշիւն ատըմ աթմազ թէտպիրինտէ պուլընտըզլարընը կէօթէրիլօրար»:

— Ժէնէրալ Ջօնէվին Մաքէթօնիայա կէշմիշ օլտըզը թաատիգ օլընմազտան մատաա, օրատան ա. թիտէքի մաալտա անըն պիր մէքթուպը կազէթալարտա կէօբիւլմիւշ տիր:

«Պուլկար էհալի պէօյիւք մուհարէպէսինէ պաշլատը. Անըն ար. զուր Սան-Սթէֆանօ ահնամէսինին իճրասը տէկիլ տիր, նէ տէ պէօյիւք պիր Պուլկարիա թէշքիլինի իսթէր, իլա եալընըզ, իտարէի զալիմէտէն գուրթուլմազ վէ ինսանիլէթէ մախսուս հուրիլէթլէ եաշմազ տըր արգուլմըզ: Պուլ մուհարէպէ, հայֆա՝ քի, Մաքէթօնիայա խրիսթիանլարը պի. թիւրէճէք տիր. ֆազաթ անլէրին ինթիգամը քիւլլէրինտէն աքս ի. տէճէք տիր»:

ՍԵՐՊԻԱ

Կէշէն բաշար կիւնիւ Պէլկարտա եէնի պիր միթինկ տալի թէ. ճէմիւլ իթտի. պու տէֆա մի. թինկին ըյաաէթի ըէտիֆ ժէնէ. ըալը Մ. Ճուգիշ տէրէօհտէ իթմիշ վէ 5,000 քիշի թօբլանմըզ ըտը: Իրատը նուլթգ իտէլէր Բա. ըիլտէ իլմի հուգուգը թահսիլ իթմիշ օլան սըրպ ապօշաթլար օ.

լուպ, Մաքէթօնիայա թիւրքլէրին վէ Արնափուլարըն Սըրպալարա գարշը իճրա իթտիլէրի զատաարըզլարը նազշ ու թատատ իթտիլէր. վէ Պէլլին ահնամէսինին 23ինճի մատտէսինին իճրասը պապընտա Սիւրպիանըն թիւրքիայա վէ Էվրոբա տէվլէթլէրինէ թէվասուլ իթմէլէ պօրճ. լու պուլընտըզընը կէօթէրէք, աքսի հարտէ սըրպ հիւթիւմէթի տալի մէսուլիլէթտէն խալի գալամայաճաղընը պէյան էլլէտիլէր:

— Գրալ վէ գրալիցա եազընէն Ջարը զիյարէթ իթմէլէ կիտէճէք. լէրինտէն, վիւքէլա ըյիսի Մ. Վուիշ՝ իսթիգրազ մէսէլէսինտէն տօլայր՝ Բարիլէ ազիմէթինի թէէ. խիթ իթմէլէ մէհալար օլմուշ տըր:

— Գօմիթէ ըյիսի Մ. Պօրիս Սարաֆիլըն էլան Պէլկարտա պուլընտը մահէլինտէն Էլտէ. քանտաա Բուշմէնէ եազըլմըզ տըր: Մէրգուլ Սըրպ վաթանբէրվէրլէր իլէ իթթիֆազ հասըլ իտուպ, Մաքէթօնիայա մի. թէթիֆէն չալըշմազ իշիւն զալիլէթ իթմէքտէ իմիշ: Մաքէթօնիայա Սըրպ գօ. միթէսինին ըյիսի Մ. Սթէթիսլալ Սիմիսի իլէ Մ. Սարաֆիլ իթթիլաֆի հասըլ իթթիլէր:

— Բօլիթիգա սէպէպլէրի իլէ Սիւրպիանըն հէյէթի վիւքէլալը իսթիֆա իտէճէք օլտըզը Պէլկարտա թէլէկարաֆլար պիւտիրմիշ տիր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Ջար Ֆէխամ. Բ. Էն Ֆէրտինանտ հազրէթլէրինէ պիր թէլէկրաֆլէ, Կրանտիք Նիքօլայա իպրազ օլընան հիւսնի գապուլտան տօլայը թէշէքիւրաթընը վէ թազ ըրիթ նազապիլ մուհապէթի տօն. թանէսինի պէյան իթմիշ տիր:

— Հարպիլէ նազըրը ժէնէրալ Բարբիքով՝ գապուլ իթթիլի էմր իւզրէ՝ Շրքաա մէրասիմինէ իշթի. ըաք իտէն զապիթլէրէ վէ ասըբըլէրին պիր գըսմընա մէտուլիօլար թէվլի իտէճէք տիր:

— Սօֆիատան Էվրոբա կազէ. թալարընա վերիլէն թէլէկրաֆի հափատիսինէ պիւնաէն, Մաքէթօնիա իսթիլալաթընտան տօլայը՝ Պուլկարիա վէ թիւրքիա պէնիլտէ սօվուզըզ հիւքմ իթմէքտէ օլտըզընտան՝ Ֆէխամ. Բրէնս Ֆէրտինանտըն Սթանպուլ կիտէճէկի լարիլա էլան թային օլընմալըն տըր:

— Մաքէթօնիայա Ճուլմաաի պալատա Միքայիլովսքի թարաֆտարը օլան չէթէլէրին ֆիթուհաթ իթտիլէրինի՝ Սարաֆիլ գօմի. թէնի թէքիլպ իտէյօր: Քէշա Նիքօլըն 80 քիշի իլէ սինօրտան անճազ պէշ քիլօմէթրօ իլէրի կիտէպիլտիկինի, վէ օրալարտա պիր գաշ քէօլ եազմըզ օլտըզընը Մա. ըաֆիլ թարաֆտարարը եազուպ, Բէթօրմինին վերմիշ օլտըզը հա.

վատիս եալան տըր տէյօրլար: Թէսիֆ օլընըր քի՝ պու սըրա պուլկար գօմիթէ ըյիսիլէրի տալի պիլիմքիլէր կիպի եէքտիկէրինի թէքիլպ վէ թայիպ իտէյօրլար:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 5 Հօկտեմբեր

ՉԱԽԻԼԻ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալոն Լիպ. 57-58 հ.թ. 8.40/9.00	Արապա Լիպ. 53-62 հ.թ. 7.20/10.20
ԱՐԲԱ	
Վալոն 100 քիլո 8.90/9.05	Արապա 45-50 լիպ. հ.թ. 5.20/5.40
ՉԱՎՏԱՐ	
Վալոն 53-54 լիպ. 6.80/6.90	Արապա 6.90/7.00
ԲԱՐԻՑԱ, 100 քիլո 19.20/19.30	ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիլո 14.00/20.00
ԵՈՒԼԱՅ	
Վալոն 100 քիլո 10.00/10.10	Արապա հէքթ. 5.40/5.00
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 56-57 հ.թ. 6.60/7.20	ՏԱՐԸ Լիպ. 57-58 հ.թ. 8.40/7.00
Կիւնտէ 500-600 արապա վէ 25-30	Վալոն կէլմէքտէ տիր:
Վալոն մուսամէլէսի ալթուն ֆըրանքլէ, արապա կիւլիւլէ, նաքօլէօն 20.40 ֆրանք:	

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղաղալարընտա իւրիք սաթըլարը:	
Ինկիլիզ իւրիկի Ն. 8-14	10.20
» » Ն. 18-24	12.20
Եէրլի իւրիք Ն. 8-14	9.80
Աթըլըն բամուք հօդա	2.00
Բապուկ ֆիլաթլարը եւլէսէլմէքտէ տիր:	

ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա բաղաղալարընտա պազալիլէ մալլէրին պու կիւնիլ ֆիլաթը, ալթուն ֆրանք իլէ:	
ԳԱՀՎԷ 1.50/1.85	
Շէֆէր Նէմցէ - .56	
» (Քէսմէ) սանտըզ 29.50	
Բիրիւն ճարն չուլալը 37.00/-	
» Ֆիլիպէ » 41.00/-	
» Ինկիլիզ » 25.50	
» Բիգօն » 52.00	
ԿԱՋ Սանտըզ 7.20	
Չէթիւն ԵԱՂԸ քիլո - .78/-	
ԳՈՒՐՈՒ ԻԻՋԻԻՄ - .32	

ՍԱՐԱՅԻՅԷ

Նաքուլէն 20.47 1/2 ֆրանք	
Օսմ. լիւրաք 22.80 ալթուն ֆրանք	

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Նախճէսա (Յոյս) հայ դերասանական խումբը այս գիշեր՝ պիտի ներկայացունէ առաջնորդութեամբ Տ. Վ. Պապանի «Դատաւոր Կոմսէն ոճրագործ եղբայրը» կամ «Ներկորեակ քոյրեր» բարդալից թատերադրութիւն 6 արար:

Ծիծաղաշարժ զաւելտ 1 արար:

Վալը, կիրակի գիշեր, պիտի ներկայացուի «Սէզար Պարճիա» սրտաշարժ թատերախաղ և աբար:

«Կարմիր բանթալօն» խիստ ծիծաղաշարժ զաւելտ 1 արար:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войникова—Варна